

Աշոտ Ն. Հայրունի
Պապւմ. գիտ. դոկտոր

ԿԱՐԵՆ ՅԵՊՊԵԻ ՓՐԿԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ*

Մաս առաջին: Մեծ մարդասերի գործունեությունը Ուռհայում

Բանալի բառեր – Կարեն Յեպե, Ուռհա, Հալեպ, Մեծ եղեռն, Ազգերի լիզա, Յոհաննես Լեփսիուս, Գերմանական Արևելյան առաքելություն, առևանգված հայերի ազատագրում:

Մուտք

Չնայած Կարեն Յեպպեի և ավելի քան երեք տասնամյակ անընդմեջ նրա իրականացրած հսկայածավալ աշխատանքների մասին թե՛ եվրոպական և թե՛ հայ իրականության մեջ բազմաթիվ անդրադարձներ են եղել, հրատարակվել են արժեքավոր գրքեր և այլ ուսումնասիրություններ¹, այնուհանդերձ այդ մեծ մարդասերի և հայանվեր գործչի բազմաշերտ և բազմախորք գործունեության լուսաբանումը դեռևս կարիք ունի **ամբողջացման**:

Դա կարևորվում է ոչ միայն զուտ գիտական տեսանկյունից, այլև ժամանակի ընթացքում արևմտյան հայագիտական ու ցեղասպանագիտական շրջանակներում նրա մասին ի հայտ եկած որոշ թյուրըմբռումները հաղթահարելու համար: Մասնավորապես երբեմն լսվում է այն տեսակետը, թե իբր Յեպպեն ռասիստ էր, և որպես հիմնավորում նշվում է, թե նա հայի տեսակը կամ ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, հայկական ռասան ավելի բարձր էր գնահատում այլ ռասաներից: Նրա առաքելական կենսագրության և աշխատանքային տարեգրության ցանկացած ամբողջական և բարեխիղճ քննության դեպքում, սակայն, պարզ է

Թ (ԺԵ) րաբի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
վլմ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.07.2017:

¹ **Կարեն Յեպպեի** մասին փաստավավերագրական գրքեր են հրատարակել Ինգեբորգ Մարիա Զիկը և Յակոբ Կյունցլերը, որն, ի դեպ, նաև մշտապես սերտ համագործակցության և կապի մեջ է եղել Յեպպեի հետ: Տես **Sick, Ingeborg Maria**, Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1929. Հմտ. **Künzler, Jakob**, Dein Volk ist mein Volk, Basel 1939. Սվենտ Ստեռլկրին Բեքի՝ 1982 թ. լույս ընծայած գրքում ամփոփ կերպով ի մի են բերվում Յեպպեի կենսագրությունն ու հայանվեր գործունեությունը: Տես գրքի հայերեն թարգմանությունը, **Բեք, Սվենտ Ստեռլկրին**, Մի աներկիր ժողովրդի մոտ, Վանաձոր 2000: Արևմուտքում Յեպպեի մասին հրատարակվել է նաև մի վեպ: Տես **Schwede, Alfred Otto**, Geliebte fremde Mutter. Karen Jepses Lebensweg, Berlin 1974. Ինչ վերաբերում է հայ հետազոտողներին, ապա այդ հարցում մեծագույն երախտիքն ունի Յակոբ Չոլաքեանը, որը հրատարակել է մի արժեքավոր մենագրություն Յեպպեի և նրա աշխատանքային տարեգրության մասին: Տես **Չոլաքեան Յակոբ**, Քարէն Եփփե. հայ գողգոթային և վերածնունդին հետ, Հալէպ 2001. Թեման արծարծվել է նաև Արտաշես Արեղյանի, Արամ Սահակյանի, Սահակ Խաչաթյանի և այլոց հրապարակումներում: [Čolak‘ean Jakob, K‘arên Yep‘p‘e. hay goğgot‘ayin ev veracnowndin het, Halêp, 2001].

դառնում, որ նման դատողությունները սին և մտացածին են, և այն անգուգական **մարդասիրությունը**, որը Յեպպեին առաջնորդում էր իր հայանվեր գործունեության մեջ, որևէ առնչություն չունի ռասիզմի հետ և չի էլ կարող ունենալ: **Սույն հոդվածաշարը, որտեղ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ արժեքավոր սկզբնաղբյուրներ, մի նոր փորձ է՝ ամբողջականորեն լուսաբանելու Յեպպեի գործունեությունը, մի անհատականության, որը, ի տարբերություն հայ ժողովրդի բազմաթիվ այլ բարեկամների ու մարդասերների, ոչ միայն իր բողոքի ձայնը բարձրացրեց թուրքական ցեղասպան քաղաքականության դեմ և այդ մասին տեղեկացրեց քաղաքակիրթ աշխարհին, այլև ստանձնեց որոշակի փրկարար առաքելություն՝ դրան նվիրաբերելով իր ողջ կյանքը:**

1902 թվականին էր, երբ դանիուհի օրիորդ Կարեն Յեպպեն² հայ ժողովրդի բարեկամ, Հայաստանի օգնության դանիական կոմիտեի հիմնադիր և ղեկավար Ազե Մեյեր Բենեդիկտսենի հրապարակումների և գեկուցումների միջոցով իրագեկ դարձավ համիդյան կոտորածների, վերապրած հայության գրկալից դրության մասին և հակառակ ծնողների կամքին, վճռեց մեկնել Հայաստան ու նվիրվել հայ ժողովրդի վերքերի ամոքմանը: Իր որոշումը Յեպպեն հաղորդեց Բենեդիկտսենին և երբ նրանից տեղեկացավ, որ Յոհ. Լեփսիուսը Ուռհայում իր հիմնած որբանոցի համար³ մի ուսուցչուհի էր որոնում, նա դիմեց Լեփսիուսին և ստանալով նրա համաձայնությունը՝ 1903 թ. հոկտեմբերի 4-ին մեկնեց Ուռհա⁴, որտեղ շուտով դարձավ այդ հաստատության փաստացի ղեկավարը:

1. Կարեն Յեպպեի որբախնամ գործունեությունը Ուռհայի հայկական որբանոցում մինչև Առաջին աշխարհամարտի բռնկումը

Յեպպեն անսպառ նվիրումով ձեռնամուխ եղավ իր գործին՝ ժամանակակցի բնութագրմամբ՝ «ամենքի համար» դառնալով «ամեն ինչ»⁵, և պատահական չէ, որ նրա ներդրած մանկավարժական մեթոդների և դաստիարակության սկզբունքների շնորհիվ որբանոցը կարճ ժամանակում մեծ համարում ձեռք բերեց ոչ միայն տարածաշրջանում, այլև հեռավոր վայրերում:

Անելիքները շատ էին: Ինչպես նշում էր Յեպպեն, առանձնապես դժվար էր նոր ընդունված երեխաների դաստիարակությունը, քանի որ նրանք, ֆիզիկապես թույլ և հյուծված լինելուց բացի, զուրկ էին նաև կենսուրախության և ինքնավստահության բնական մղումներից ու «սարսափում էին կյանքից»: Ուստի անհրաժեշտ էր տևական խնամքի միջոցով նրանց ֆիզիկապես կազդուրել և միաժամանակ, որպեսզի այդ խնամքը «օրինության» փոխարեն «անեծք» չդառնար, և որբերն ի վիճակի լի-

2 Տե՛ս Verschiedenes, Der Christliche Orient, 1903, S. 192. Կ. Յեպպեն ծնվել է 1876 թ. հուլիսի 1-ին Դանիայի Գիլինգ գյուղաքաղաքում: Ծննդավայրի հանրակրթական դպրոցը եզրափակելուց հետո նա գերագնացությամբ ավարտեց նաև Օրդրուպի լատինական դպրոցը, որտեղ այնուհետև անցավ ուսուցչական աշխատանքի: Տե՛ս **Sick, I. M.**, Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1929, S. 32, 65-67. Յեպպեի վաղ շրջանի կենսագրության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Künzler, J.**, Dein Volk..., S. 22-30. Հմտ. **Չոլաքեան Յ.**, Քարէն Եփփէ..., էջ 5-9: Յեպպեն դեռ մինչև Ուռհա մեկնելը ստանձնել էր այնտեղ գտնվող երկու որբերի՝ Լուիզա Նաթանյանի և Միսաք Մելքոնյանի խնամքի ծախսերը. անդ, էջ 12: Նա այնուհետև նրանց որդեգրեց, հետագայում ամուսնացրեց միմյանց հետ, իսկ Միսաքը դարձավ նաև Յեպպեի լավագույն օգնականներից մեկը նրա բազմաթիվ հայանպաստ ձեռնարկները կյանքի կոչելիս:

3 Լեփսիուսը դեռ 1895 թ. աշնանը հիմնադրել էր «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպությունը (այսուհետ՝ ԳԱՎ), որը նրա ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ կոտորածների մի շարք շրջաններում հայօգնության աշխատանքների իրականացմանը՝ մի որբանոց հիմնելով նաև Ուռհայում:

4 Տե՛ս Verschiedenes, „Der Christliche Orient...“, 1903, S. 192.

5 **Sick, I. M.**, Karen Jeppe..., Stuttgart, 1929, էջ 79: Յեպպեն Ուռհայում սովորեց նաև հայերեն լեզուն: Տե՛ս **Չոլաքեան, Յ.**, Քարէն Եփփէ..., էջ 15: [Čolak'ean Yakob, K'arên Yerp'p'e..., p. 15].

ներին հետագայում ինքնուրույն ապրել, նաև «հոգեպես» կազդուրել նրանց, այն է՝ «ներշնչել վստահություն իրենց և իրենց ապագայի նկատմամբ» և զարգացնել կամային հատկանիշները⁶: Հուսալքության, ընկճվածության և անգործության ախտանիշներից երեխաների ձեռքագատումը, Յեպպեի համոզմամբ, կարող էր կատարվել նպատակապես աշխատանքային դաստիարակության միջոցով, որը միաժամանակ կնպաստեր նրանց մեջ կարգապահության և պատասխանատվության արմատավորմանը: Ուստի որբանոցի առօրյան կազմակերպվում էր այդ հանգամանքների խստագույն հաշվառմամբ՝ հիմնված խաղի և աշխատանքի զուգամիասնության վրա, որտեղ յուրաքանչյուրն ուներ իր առանձին պարտականություններն ու անելիքները⁷: Ընդ որում՝ որբերին միշտ հանձնարարվում էին փոփոխվող աշխատանքներ, որպեսզի «միտքը, ձեռքը և ֆիզիկական ուժը» համամասնորեն զարգանային: «Այժմ մեր առաջադրանքն է դաստիարակել մարդիկ, - գրում էր Կ. Յեպպեն, - որոնք կհարգեն աշխատանքը և այն իրենց ներքին մղումով կկատարեն խղճմտորեն: Դա դժվար խնդիր է և պահանջում է մեծ համբերություն...: Անհրաժեշտ է հոգ տանել, որ երեխաները միշտ աչքի առջև ունենան ջանասեր և խղճմիտ մարդկանց, քանի որ լավ օրինակը դաստիարակության բոլոր միջոցներից կարևորագույնն է: Այնուհետև հետզհետե ամրապնդվում է նաև թույլ մարմինը, և մտավոր ունակությունները, որոնք միանգամայն անխնամ և ավելի անտեսված էին, քան մարմինը, արթնանում են: Աննկատ, ինչպես ծառը այգում, աճում է մի առողջ, կենսուրախ երեխա, որը հետագայում գործուն, ներդաշնակորեն զարգացած անձնավորություն է դառնում և կարող է աշխարհում տեղ գրադեցնել»⁸:

Յեպպեի համոզմամբ՝ որբ երեխաների ներդաշնակ հոգեկան ներաշխարհի ձևավորման հարցում մեծ կարևորություն ուներ նրանց մեջ արմատավորված միայնության հոգեբանական բարդույթի հաղթահարումը: Ուստի իր և իր հաստատության կարևորագույն պարտականություններից մեկը նա մշտապես համարում էր երեխաների և նրանց եվրոպացի հոգեծնողների⁹ միջև ուղղակի կապերի ամրապնդումը¹⁰: Դեռ որբանոցի հիմնադրման առաջին տարիներից երեխաները Ծանոյան տոների առթիվ նվերներ էին ստանում իրենց հոգեծնողների կողմից: Սկզբնապես ինքնաբուխ կերպով դրսևորվող այդ իրողությունը հաջորդ տարիներին վերածվեց կայուն ավանդույթի. այնպես, որ նվերների տեսականին որոշարկվում էր ըստ երեխաների նախասիրությունների և կարիքների վերաբերյալ Յեպպեի կողմից նախապես հոգեծնողներին ուղարկված տեղեկությունների¹¹:

Նվերներից ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ նաև նրանց միջև նամակագրության զարգացումը, քանի որ այդպիսով, ինչպես Յեպպեն էր ընդգծում, երեխաները հաղորդակից էին դառնում «սիրո ակունքներին», նրանց մեջ արթնանում էին հարցեր, և «այնուհետև նրանք զգում են, որ իրենց ետևում կա մարդկանց մի մեծ շրջան, որոնք սիրով և նվիրվածությամբ իրենց ուսերի վրա տանում են մեր ողջ տունը: ...Երբ որևէ մեկը դրամը իր բերանից խնայում է կամ այլ կերպ առանձնահատուկ սեր է դրսևորում երեխայի հանդեպ, ապա երեխայի սրտում նույնպես հորդում է սիրո մի սեփական հոսանք: Սեր ոչ միայն օտար մարդկանց հանդեպ, ոչ, սեր որբանոցի իր քույրերի և եղբայրների կամ սեփական հարազատների հանդեպ»¹²:

6 Տես **Jeppe, Karen**, Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, S. 192–193.

7 Անդ, էջ 158–159: «Մենք հոգ ենք տանում, - նշում էր Կ. Յեպպեն, - որ նույնիսկ ամենափոքրիկ երեխան ունենա մի պարտականություն, մի ինչ-որ բան, որ նրանից կպահանջվի, և որը նա իրավունք չունի չկատարել կամ մասամբ կատարել». անդ, էջ 156: Op. cit., p. 158–159.

8 Անդ, էջ 160:

9 Այդպես էին անվանվում որբանոցի բարերարները:

10 **Jeppe, K.**, Von den Geschenken und Briefen und von ihrem Wert als Erziehungsmittel, „Der Christliche Orient“, 1914, S. 67.

11 Անդ, էջ 66:

12 Անդ, էջ 67–68:

Միևնույն ժամանակ մեծ կարևորություն էր տրվում նաև երեխաների անհատականության և նախաձեռնողականության անկաշկանդ զարգացմանը, որի համար նրանց հատկացվում էր բավականաչափ ազատ ժամանակ և տարածք: Երեխաների մեջ ձիշտ և ժամանակին ինքնուրույնություն ձևավորելը Յեպպեն համարում էր որբանոցի կարևորագույն խնդիրներից մեկը: Նրա համոզմամբ՝ անհրաժեշտ էր վաղօրոք սկսել նրանց ազատ թողնել, որպեսզի ուժեր հավաքեին հետագայում «միայնակ գոյատևելու համար», սակայն մյուս կողմից նաև «նրանց ամուր բռնել», որպեսզի «չշեղվեին ճանապարհից»¹³: Եվ որ ամենաուշագրավն է, բոլոր պայմանները ստեղծված էին երեխաների լիարժեք ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Յեպպեն և իր գործընկերները դա խիստ կարևոր էին համարում՝ առաջնորդվելով հայ ժողովրդի հանդեպ որբանոցի և առհասարակ ԳԱԱ-ի ստանձնած մեծ և անշահախնդիր առաքելության գիտակցումով: «Մենք նրանց վերցրել ենք որպես մարդիկ դաստիարակելու համար, որոնք Աստծո օգնությամբ պետք է դառնան իրենց ժողովրդի լույսը և աղը, - նշում էր Յեպպեն: - ... Մենք մեր հիմնական խնդիրը պետք է համարենք այս ժողովրդի գրկանքների մեջ նրա հետ լինել և նրա համար պատրաստել հնարավորինս լավ և գործուն մարդիկ, որոնք այնուհետև, յուրաքանչյուրն իր տեղում, կկարողանան շարունակել մեր աշխատանքը»¹⁴:

Երեխաների առօրյան հագեցած էր հայոց պատմության հերոսապատում էջերի, ազգային հերոսների վառ օրինակների ոգեշնչումով: Ավագ տղաները, օրինակ, հիմնել էին մի դասախոսական ընկերություն, որը կազմակերպում էր հաճախակի հավաքույթներ հայ ժողովրդի պատմական անցյալի և արդի իրավիճակի հետ կապված զանազան խնդիրների քննարկման համար: Ինչպես նշում էր Կ. Յեպպեն իր «Մեր տղաների հոգևոր կյանքից» վերնագիրը կրող հոդվածում, այդ քննարկումների հիմնական նպատակը հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր դրության հաղթահարման ուղիների որոնումն էր¹⁵: Հավաքույթներում բարձրաձայն ընթերցվում կամ ասումնքվում էին հատվածներ հայ դասական գրականությունից, լուսաբանվում էին շաբաթվա կարևորագույն իրադարձությունները և այլն: Ավելի կրտսեր երեխաները հիմնել էին մի երգեցողության ընկերություն, որտեղ նրանք սովորում էին հայրենասիրական երգեր և այնուհետև դրանք կատարում որբանոցի իրենց ընկերների համար: Այդ միջոցառումների կազմակերպման դրդումները երեխաները ստացել էին Կ. Յեպպեից, սակայն դրանք իրականացնում էին բացառապես սեփական ուժերով և մտահղացումներով¹⁶:

Որբանոցի տնօրինությունը նրանց համար հիմնել էր նաև մի փոքրիկ գրադարան, որտեղ պահվող շաբաթաթերթերից մեկը նախատեսված էր ավագների, իսկ մյուսը՝ լի պատկերազարդ և հետաքրքիր պատմություններով, կրտսերների համար¹⁷: Փաստորեն, որբանոցի ղեկավարության կողմից խիստ մեծ կարևորություն էր տրվում երեխաների մեջ ազգային և համամարդկային մտահոգությունների ձևավորմանը: «Մենք իրավունք ունենք ասել, - նշում էր այդ առթիվ Կարեն Յեպպեն, - որ մեր երեխաները որբանոցում եղած ժամանակ, ինչպես և այնտեղից հեռանալուց հետո բարձրին են ձգտում: Նրանք չեն գոհանում միայն նրանով, որ ապրելու համար անհրաժեշտ ամեն բան ունեն, այլ փորձում են նաև ինչ-որ բան անել ուրիշների համար, առաջին հերթին իրենց ժողովրդի և իրենց խեղճ հայրենիքի, որն այդքան խորապես ընկղմվել է թշվառության մեջ: Եվ մենք հավատում ենք և հույսով ենք, որ նրանք կաջակցեն նրան ոտքի կանգնեցնելու և արժանավայել գոյություն սկսելու հարցում: Դրանում մեզ օգնում է ամենակարող

13 **Jeppe, K.**, Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, S. 106.

14 **Harnack, Anna**, Wo bleiben unsere entlassenen Waisenkinder?, „Der Christliche Orient“, 1913, S. 147.

15 Տե՛ս **Jeppe, K.**, Aus dem geistigen Leben unserer Jungen, „Der Christliche Orient“, 1911, S. 150-151.

16 Անդ, էջ 151: Op. cit., p. 66.

17 Անդ: Op. cit., p. 67-68.

Աստված»¹⁸:

Յեպպեն միանշանակորեն անթույլատրելի էր համարում նաև կրոնական քարոզչությունը լուսավորչական ծնողների երեխաների և հայ բնակչության շրջանում. հանգամանք, որ պայմանավորված էր ոչ միայն այդ հարցում Լեփսիուսի և ԳԱԱ-ի որդեգրած դիրքորոշմամբ, այլև սեփական փորձառությամբ: Քաջ գիտակցելով հայ ժողովրդի համախմբման և ազգային ինքնության պահպանման հարցում Հայ առաքելական եկեղեցու ունեցած պատմական և այժմեական նշանակությունը՝ նա հասու էր նաև այն վնասակար հետևանքներին, որ ուներ քարոզիչների գործունեությունը: Յեպպեի համոզմամբ՝ այն առանձնապես կործանարար էր հայերի համար, որոնց ազգության և կրոնի ըմբռնումները այն աստիճանի սերտ էին միահյուսված, որ մեկի կորուստը պատճառ էր դառնում նաև մյուսի կորստյանը: Դրա մասին վկայում էր նաև Ուռհայի լուսավորչական և բողոքական համայնքների օրինակը: «Բողոքական հայերը պոկվել են անցյալից և պատմությունից, - նշում էր Յեպպեն, - նրանք նման են բույսերի, որոնք դեռ խորը արմատներ չեն նետել: Ցանկացած հողմ նրանց պոկում և տանում է իր հետ: Հոգեբանական անառողջ այլակերպումները, որոնք հաճախ շողոքորթության կերպարանք են ստանում, նրանց մեջ շատ ավելի մեծ ավերածություններ են գործում, քան լուսավորչականների...»¹⁹:

Մյուս կողմից՝ Յեպպեի համոզմամբ՝ արևմտյան եկեղեցիները նաև բարոյական իրավունք չունեին Հայ առաքելական եկեղեցուց հավատացյալներ կորզել, քանի որ վերջինս իրականում ոչ միայն «անշնչացած» չէր, ինչպես ընդունված էր կարծել եվրոպայում, այլև Նոր ժամանակներում ևս անհավատալի ծանր պայմաններում կարողացել է դիմակայել և տոկալ, այլ կերպ ասած՝ ապացուցել իր կենսունակությունը և պատմության մեջ հաստատել իրեն: Թե՛ անցյալում և թե՛ Նոր ժամանակներում այդ եկեղեցու հավատացյալները նահատակության այնպիսի օրինակներ են ցույց տվել, որպիսիք այլ ժողովուրդների մեջ դեռ տեսնված չէին: Մի քննություն, որ, ըստ Յեպպեի, իրենք՝ եվրոպական եկեղեցիները, դեռևս չէին հանձնել. «Մենք իրավունք չունենք մոռանալ, - գրում էր նա, - որ հայերը Քրիստոսի համար նահատակվում էին, երբ մենք, դեռ մորթու մեջ փաթաթված, Օդիին կամ Թորին զոհեր էինք մատուցում: Եվ հավանաբար մենք պետք է մի փոքր ավելի զգույշ խոսենք «մեռած» լուսավորչական եկեղեցու մասին: Քանի որ նահատակները քրիստոնեական եկեղեցու ամենակենդանի զավակներն են: Ինչպես կարող էր մեռած մայրը այդպիսիներին աշխարհ բերել (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»²⁰:

Հետևությունը, բնականաբար, մեկն էր. հայության համախմբման հարցում եկեղեցին ուներ խիստ կարևոր նշանակություն, որի պատճառով և ի շահ հայ ժողովրդի իրագործվող բարեգործական նախաձեռնությունների հիմքում պետք է առկա լինեին նաև նրա եկեղեցու ամրապնդման ձգտումը. հանգամանք, որ անհամատեղելի էր միաժամանակ և՛ բարեգործությամբ, և՛ քարոզչությամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության հետ: Ընդ որում՝ Յեպպեն դա դիտարկում էր ոչ միայն մարդասիրական, այլև համաշխարհային քրիստոնեության շահերի տեսանկյունից: «Մենք, - նշում էր նա, - շարունակ քարոզիչներ ենք ուղարկել հեթանոսների մոտ: Մենք հառաչում ու հեծում ենք, որ իսլամն այնքան շատ քրիստոնյա համայնքներ է կործանել, իսկ մի քրիստոնյա ժողովրդի, որն իր կրոնի համար պայքարել և տառապել է, թողել ենք, որ դանդաղ մահանա: Եթե մենք այդ ժողովրդին պաշտպանեինք և գորացնեինք, ապա այժմ կունենայինք մի ամուր ամրոց իսլամի դեմ»²¹:

Ուստի ինքնին հասկանալի է, որ որբանոցում եկեղեցական տոները նշվում

18 Jeppe, K., Ein Besuch im Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1913, S. 187.

19 Jeppe, K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1909, S. 4.

20 Sick, I. M., Karen Jeppe..., S. 89.

21 Jeppe, K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1909, S. 8.

էին ըստ Հայ առաքելական եկեղեցու տոնացույցի: Երեխաները ստանում էին ընդհանուր քրիստոնեական դաստիարակություն: Նրանք ընթերցում և ունկնդրում էին ավետարանի պատմությունները, հարցերի և պատասխանների միջոցով մեկնաբանում դրանք, ուսանում Հիսուսի կյանքը և գործերը՝ միաժամանակ սովորելով նաև շարականներ: Իսկ ինչ վերաբերվում էր նրանց եկեղեցական պատկանելությանը, ապա եթե բողոքական ծնողների երեխան ցանկանար հաճախել առաքելական եկեղեցի, նա դա կարող էր անել: Նույնպես և լուսավորչական ծնողների երեխան կարող էր այցելել բողոքական եկեղեցի, սակայն նրանցից ոչ ոք որբանոցում ապրելու ընթացքում իր եկեղեցուց հրաժարվելու իրավունք չունեցավ²²: Ոչ վերջին հաշվով դրանով էր պայմանավորված այն մեծ վստահությունը, որ որբանոցում ուներ թե՛ լուսավորչական և թե՛ բողոքական հայ համայնքներում:

Ինչ վերաբերում է երեխաների դպրոցական կրթությանը, ապա թուրքական կառավարությունը որբանոցին արգելել էր հիմնել սեփական դպրոց²³, և երեխաները սկզբից նեթ հարկադրված էին հաճախել Ուոհայի բողոքական հայ համայնքի դպրոցը, որ գտնվում էր քաղաքի ամերիկյան ընկերության ազդեցության ներքո և հետևապես ուներ նաև անգլալեզուների կյան ուղղվածություն²⁴: Որբանոցի ղեկավարությունը սկզբնապես հարկադրված էր այդ փաստի հետ համակերպվել՝ հուսալով, որ կկարողանար կառավարությանը դրդել փոխելու դիրքորոշումը: Վերջինս, սակայն, այդ հարցում անդդվելի մնաց նաև հետագայում, ուստի երեխաների կրթությամբ խիստ մտահոգված՝ Կ. Յեպպեն վճռեց շրջանցելով պաշտոնական արգելքը՝ նրանց գեթ մի մասի հետ դպրոցական դասընթացը կազմակերպել որբանոցում: 1904-ին 25 երեխաների պարապմունքները տեղի էին ունենում որբանոցում²⁵: Հետագայում նրանց թիվը շարունակ ավելանում էր, և արդեն 1907-ին որբերի մեծ մասն ուսանում էր հաստատության դպրոցում, որտեղ մշտական աշխատանքի էին ներգրավվել երեք հայ ուսուցչուհիներ, իսկ բողոքական հայերի դպրոց հաճախում էին միայն 26 երեխաներ²⁶:

Յեպպեն ուշագրավ նորամուծություններ կատարեց նաև դասավանդման մեթոդիկայի բնագավառում՝ հասնելով մեծ հաջողությունների: Տեղական, նաև ամերիկյան ընկերություններին պատկանող դպրոցներում տարրական ուսուցման, այն է՝ գրելու և կարդալու հմտությունների զարգացման համար սովորաբար պահանջվում էր երեք տարի, և արդյունքում շատ քիչ ժամանակ էր մնում դասավանդման հետագա՝ միջին և բարձր աստիճանների համար: Այնտեղ երեխաները մեծ դժվարությամբ էին կարողանում անգիր սովորել հայոց այբուբենի տառերը՝ ըստ մաշտոցյան անվանումների, և այնուհետև յուրացնել դրանք: Մինչդեռ Կ. Յեպպեն ներմուծեց պատկերային ընթերցման ու հեգելու մեթոդը, որն ունեցավ շատ մեծ հաջողություն²⁷: Արդյունքում՝ միջին ընդունակություններ ունեցող երեխաները մեկ տարում կարողանում էին ոչ միայն վարժ կարդալ, այլև գրել, ինչի համար նախկինում պահանջվում էր 3-4 տարի: «Նոր մեթոդը ամերիկացիների և հայերի կողմից արագորեն այնքան լայն ձանաչում ստացավ, նշում էր ԳԱԱ-ի վարչության անդամ դր. Պաուլ Ռոհրբախն իր 1911 թ. հրատարակումներից մե-

22 Անդ, էջ 4-6:

23 Տե՛ս **Jeppé, K.**, Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, S. 98.

24 Տե՛ս **Rohrbach, Paul**, Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, S. 82.

25 Տե՛ս **Jeppé, K.**, Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, S. 98.

26 Տե՛ս **Eckart, Franz**, Das Schulwesen in Urfa und die Entwicklung unserer deutschen Schule, „Der Christliche Orient“, 1907, S. 61-62.

27 Երեխաներին ցույց էին տրվում պատկերազարդ տախտակներ: Պատկերների ներքևում, որոնք երեխաներին ծանոթ և սիրելի առարկաներ էին, գրված էին նրանց անվանումները: Այնուհետև ուսուցչուհին նրանց հարցնում էր, թե ինչ են նշանակում այդ պատկերները, և նրանք պետք է այդ անուններն այնքան դանդաղ արտաբերեին, որ բոլոր հնչյունները լսվեին: Իսկ հետո նրանց ցույց էին տրվում համապատասխան տառերը: Այդ եղանակը հնարավորություն էր ընձեռում 17 պատկերների միջոցով ներկայացնել հայկական այբուբենի բոլոր հնչյուններն ու տառերը: Տե՛ս Rohrbach, Paul, Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, S. 82.

կում,- որ հեռավոր վայրերից բազմաթիվ ուսուցչուհիներ այցելում էին մեր որբանոցի դպրոցը՝ դրան ծանոթանալու և այդ եղանակով դասավանդելու համար: Բազմաթիվ քաղաքներից և գյուղերից հայտնվեցին համայնքների ղեկավարներ, դպրոցում կատարեցին ազատ ունկնդրում և մեզանից խնդրեցին ուսուցչուհիներ: Ներկայումս այդ մեթոդն այն աստիճանի լայն տարածում է ստացել, որ նրա միջոցով տեղի է ունենում դասավանդման գործի ընդհանուր վերածնակություն: Այն սկսել է օգտագործվել նաև թուրքերենի համար: Մենք պետք է ձգտենք, որ մեր որբանոցը հայ մանկավարժական ուժերի, ամենից առաջ տարրական դպրոցների ուսուցչուհիների պատրաստման համար դառնա սերմնացան, իսկ դրա համար այլ բան հարկավոր չէ, քան պահպանել այն, ինչն արդեն կա»²⁸:

Այսպիսով, դառնալով 14-15 տարեկան՝ երեխաներն ավարտում էին տարրական դպրոցը, որից հետո նրանք, ովքեր ցածր կամ միջին առաջադիմություն էին ցուցաբերել, որբանոցի արհեստագործական ձեռնարկություններում ուսանում էին զանազան արհեստներ՝ այնուհետև ներգրավվելով աշխատանքի այդ ձեռնարկություններում ու գորգագործական ֆաբրիկայում²⁹: Իսկ առավել ընդունակ և օժտված երեխաներին թույլատրվում էր մի քանի տարի ևս դպրոց հաճախել, որից հետո, եթե հոգեծնողները համաձայնում էին շարունակել դրամական հասկացումները, նրանք ուղարկվում էին Այնթապի կամ Խարբերդի ամերիկյան վարժարանները՝ բարձրագույն կրթություն ստանալու համար³⁰: Կ. Յեպպեն որբանոցի օժտված աղջիկների միջավայրից էր ընտրում ապագա մանկավարժներին, որոնք, իհարկե, ավարտել էին նաև վարժարանը³¹: Ուսումն ավարտելով՝ նրանք այնուհետև աշխատանքի էին նշանակվում որբանոցում կամ ուղարկվում այն դպրոցները, որոնք որբանոցից մանկավարժներ էին խնդրել³²: Այդ կերպ Յեպպեի դասավանդման նոր մեթոդը շարունակում էր տարածում ստանալ, և շուտով, ինչպես վկայում էր Ուռհայի ամերիկացի քարոզչուհի Կորինա Շատուկը, Ուռհայի, Սևերեկի, Գառնուշի, Ադիյանմանի և այլ շրջանների դպրոցներում ոչ մի ուսուցչուհի աշխատանք չէր ստանում, եթե դրան ծանոթ չէր³³:

Չնայած մասնագետների պահանջարկն անհամեմատ ավելի արագ տեմպերով էր աճում, քան որբանոցը կարող էր բավարարել, այնուամենայնիվ դժվարը միայն սկիզբն էր: «Որբան էլ փոքր է այն, ինչ մենք մեր համեստ միջոցներով կարող ենք անել,- նշում էր Յեպպեն իր նամակներից մեկում,- և որբան էլ մեծ է այս երկրում դպրոցը զարգացնելու անհրաժեշտությունը, մենք, մինևույն է, չենք վիստվում... Քանի որ ավելի լավ ձևով չենք կարող նպաստել ժողովրդի դաստիարակությանը, քան հիմնավորապես և խնամքով առանձին անհատներ դաստիարակելով: Այնուհետև ամեն բան կընթանա այնպես, ինչպես երբ քար ես նետում ջրի մեջ, և ալիք-

28 Ադ, էջ 82-83:

29 Լեփսիուսը դեռ 1898 թ. գարնանը Ֆրիգոդոֆում գտնվող իր սեփական գորգագործական ֆաբրիկան տեղափոխել էր Ուռհա և այնտեղ վերագործարկելով՝ աշխատանքի էր ընդունել Ուռհայի կոտորածների հետևանքով այրիացած 500 անթևան կանանց: Աշխատողների անձնակազմը կարճ ժամանակ անց սկսեց համարվել նաև որբանոցի շրջանավարտներով: Բացի այդ՝ ԳԱԱ-ն որբանոցին կից հիմնել էր նաև մանածագործարան, ներկարարանոց և կաշեգործարան, որոնք ֆաբրիկայի հետ միասին դարձան որբանոցի սաների արհեստագործական կրթության կենտրոնները: Տես Urfa (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, S. 90. Հմնմ. **Չուպեան, Յ.**, Քարէն Եփիե... էջ 18:

30 Տես **Jeppé, K.**, Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, S. 99.

31 1907-ին դասավանդող բոլոր՝ թվով 3, ուսուցչուհիները, այդ վարժարանն ավարտած, որբանոցի նախկին սաներ էին: Տես **Eckart, F.**, Das Schulwesen in Urfa und die Entwicklung unserer deutschen Schule, „Der Christliche Orient“, 1907, S. 62.

32 Իլսգա Թաթոյանը, օրինակ, աշխատում էր Գառնուշի դպրոցում: Մեկ ուրիշը՝ Աննա Աբաջյանը, աշխատանքի էր նշանակվել Այնթապի իգական դպրոցում: Տես **Jeppé, K.**, Wo bleiben unsre entlassenen Waisenkinder?, „Der Christliche Orient“, 1913, S. 152-153. Հմնմ. **Jeppé, K.**, Aus Urfa, „Der Christliche Orient“, 1910, S. 35.

33 Տես **Jeppé, K.**, Aus Urfa, „Der Christliche Orient“, 1910, S. 34.

ները վազում են չորս կողմը: Նրանք շատ ուրիշ մարդկանց էլ են ողողում...»³⁴:

Յեպպեն միանգամայն իրավացի էր, քանի որ պահանջարկն այնուամենայնիվ իր բավարարման ուղիները գտավ, և այն դպրոցներն ու համայնքները, որոնց որբանոցը չէր կարող ուսուցիչներ տրամադրել, իրենք էին սեփական ուսուցիչներին ուղարկում այնտեղ կատարելագործման համար³⁵: Այդ կերպ դպրոցներին օգնություն ցուցաբերելու հնարավորությունները բազմապատկեցին՝ ըստ Յեպպեի պատկերավոր բնութագրման, հիշեցնելով Աստվածաշնչյան իրողությունը: «Այս հարցում նույնպես փաստարկվեց, - նշում էր նա, - որ Աստծո կամքով հինգ հացը և երկու ձուկը հինգ հազար մարդու կերակրում են...»³⁶:

Հարկ է նշել, որ չնայած Կ. Յեպպեն մեծ կարևորություն էր տալիս երեխաների լիարժեք դաստիարակությանը, այնուամենայնիվ հաճախակի էին նաև այն դեպքերը, երբ երեխաները հաստատությունից հեռանում էին ավելի վաղ, քան նախատեսված էր: Դա վերաբերում էր հիմնականում նրանց, ովքեր հարազատներ ունեին, որոնք, ժամանակի ընթացքում բարելավելով իրենց կենսապայմանները, խնդրում էին երեխաներին հանձնել իրենց: Լինում էին նաև դեպքեր, երբ որբերի՝ ամիսներ և տարիներ շարունակ անհետ կորած հայրերը հանկարծ հայտնվում էին և ցանկանում վերցնել իրենց երեխաներին: Նման դիպվածներն առանձնապես շատ էին Կիլիկիայի՝ 1909 թ. կոտորածներից հետո, ուր սովորաբար Ուռնայից և այլ վայրերից բազմաթիվ տղամարդիկ էին մեկնում՝ աշխատանք որոնելու³⁷:

Յեպպեն նշված դեպքերում երբեք կանոնական մոտեցում չէր դրսևորում: Եթե, օրինակ, երեխայի հարազատները «վատ մարդիկ» էին և վստահություն չէին ներշնչում, ապա նրան վերադարձնելու առանձնապես մեծ ցանկություն չէր դրսևորվում: Նման դեպքերում երեխային էր թողնվում իր ձակատագրի ընտրությունը, և եթե վերջինս վճռեր մնալ որբանոցում (ինչպես և նման դեպքերում հիմնականում լինում էր), ապա նրան ոչ ոք, նույնիսկ ծնողներն այնտեղից չէին կարող բռնի կերպով հեռացնել³⁸:

Երեխաներից ոմանք, աշխատունակ դառնալով, որբանոցից համեմատաբար շուտ էին հեռանում՝ իրենց հիվանդ և անաշխատունակ հարազատներին օգնելու դրդապատճառով: Պատահում էր նաև, որ որոշ ընտանիքներ որդեգրման նպատակով որբանոցից երեխա էին խնդրում, ինչը սովորաբար չէր մերժվում³⁹: Յեպպեն նման դեպքերում առաջնորդվում էր այն ելակետով, որ «քանի դեռ ժողովուրդն իր որբերի համար կարող է հոգ տանել, մենք չպետք է այդ անենք: Նա այդ հարցում անառարկելիորեն ունի առաջնագույն իրավունքն ու պարտավորությունը»⁴⁰: Այնուամենայնիվ, որևէ երեխայի որդեգրման համար որբանոցը բավականին երկար փորձաշրջան էր առաջարկում, և եթե նոր միջավայրում համատեղ կյանքի առաջին շրջանում ի հայտ էր գալիս անհամապատասխանություն, ապա երեխան դարձյալ հետ էր վերցվում⁴¹:

Ուշագրավ է, որ Յեպպեն կարողանում էր որբանոցից հեռացած երեխաներին մշտապես պահել իր տեսադաշտում՝ հարկ եղած դեպքում կարողանալով որպես խորհրդակից և օգնական միշտ կանգնել նրանց կողքին: Երբեմն նրա աներևույթ ներկայությունն այնքան հմտորեն էր տնօրինում հեռացած երեխաների ձակատագիրը, որ վերջիններս այդ մասին երբևէ չէին տեղեկանում: Օրինակ՝ չնայած հազվադեպ, սակայն լինում էին նաև անհանդուրժելի հակումներ և հատկանիշներ ունեցող երեխաներ, որոնց հարկ էր լինում հաստատությունից հեռացնել՝ մյուս-

34 Անդ, էջ 37:

35 Անդ, էջ 36:

36 Անդ, էջ 34:

37 Տե՛ս **Jeppé, K.**, Wo bleiben unsre entlassenen Waisenkinder?, „Der Christliche Orient“, 1913, S. 147-148.

38 Անդ, էջ 151:

39 Անդ, էջ 151-152:

40 Անդ, էջ 151:

41 Անդ, էջ 152:

ներին «վտանգի չենթարկելու համար»: Կարծելով, թե մատնվել են բախտի քմահաճույքին՝ այդ երեխաներն այնուհետև գործադրում էին իրենց բոլոր ջանքերը սեփական ճանապարհը հարթելու համար և Յեպպեի անտեսանելի աջակցությամբ որպես կանոն միշտ կարողանում էին հաջողության հասնել: Միայնակ բախումը իրականության հետ և «սեփական ուժերով» ձեռք բերված հաջողությունները կոփում և վերափոխում էին նրանց, մինչդեռ նրանք անտեղյակ էին, որ շարունակ գտնվել են հոգատար հսկողության ներքո: «Մեր տղաները երբեք չեն իմանա, որ մեր ձեռքն էր նրանց դրսում պահում,- նշում էր այդ առթիվ Յեպպեն,- և որ մենք նախապես գիտեինք այն «երջանիկ դիպվածի» մասին, որը նրանց արդեն առաջին գիշերը օթևան ստեղծեց և հաջորդ օրը թույլ տվեց նաև աշխատանք գտնել»⁴²: Նման դեպքերում իրողությունն ամբաստանաբար գաղտնի էր պահվում մի կողմից՝ հեռացած տղաներին սեփական ուժերի հանդեպ ինքնավստահություն ներշնչելու և մյուս կողմից՝ որբանոցում մնացած սաների մեջ պատասխանատվության զգացումն արթուն պահելու նպատակով: Իսկ հեռացած երեխաների փոխարեն որբանոց էին ընդունվում անօգնական վիճակում գտնվող այլ երեխաներ, որոնց նախկինում անհնար էր եղել ընդունել հաստատություն: Նախատեսված ժամկետից շուտ հեռանալու վերոնշյալ դեպքերը երեխաների ընդհանուր գանգվածի մեջ մեծ թիվ չէին կազմում, և որբանոցի սաները մեծ մասամբ կյանք էին մտնում որպես հասուն մարդիկ և կատարելապես տիրապետելով որևէ մասնագիտության:

Բնութագրական է նաև, որ եթե որևէ չքավոր բազմանդամ ընտանիքում հայրը մահանում էր, ապա երեխաներից երկուսը թողնվում էին մոր խնամքին, իսկ մյուսներն ընդունվում էին որբանոց: Ինչպես Յեպպեն էր 1912-ին տեղեկացնում, որբանոցի սաների կազմն այդ շրջանում հիմնականում համալրվում էր այդպիսի երեխաներով⁴³:

Ինչևէ, չնայած հաստատությունն ըստ անհրաժեշտության և հնարավորությունների շարունակում էր նոր երեխաներ ընդունել, սակայն ժամանակի հետ 1895-1996 թթ. կոտորածների վերքերը սկսում էին սպիանալ, կարիքները՝ նվազել, և տարիների ընթացքում մեծացող ու կյանք մտնող երեխաների հետ նվազում էր նաև որբանոցի սաների թվաքանակը: Դրա մասին ավելի ցայտուն կարող են վկայել վիճակագրական տվյալները: Եթե 1901-ին որբանոցում խնամվում էին 400, իսկ 1902-1904 թվականներին՝ 310 երեխաներ⁴⁴, ապա 1905-ին այնտեղ կային 235⁴⁵, իսկ 1911-ին՝ ընդամենը 150 որբեր⁴⁶: Այդ տարվա դրությամբ հաստատությունում մեծացել ու կյանք էին մտել շուրջ 1000 երեխաներ⁴⁷:

Որբանոցը հեռացած երեխաների հետ սերտ կապ էր պահպանում նաև հետագայում: Զանազան տոնական միջոցառումներ ամիս էին դառնում, որ նրանք դարձյալ հավաքվեն նույն հարկի տակ: Չնայած շատերը գտնվում էին այլ հեռավոր վայրերում, և ընտանիք կազմած որբուհիներն առավելապես հարկադրված էին բավարարվել միայն նամակագրական կապով, սակայն ամենքն ունեին այն ըմբռնումը, որ իրենց մանկության տունը հարկ եղած դեպքում միշտ բաց էր իրենց առջև⁴⁸: Յեպպեն մեծ կարևորություն էր տալիս երեխաների մեջ այդ գիտակցության ամրակայմանը: «Մենք նրանց արտաքին և ներքին կյանքում ունենք միևնույն խնդիրը,- նշում էր նա իր՝ «Մեր նախկին սաները» հոդվածում: -Նրանք

42 Անդ, էջ 150:

43 Տես **Jeppe, K.**, Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, S. 192.

44 Տես „Der Christliche Orient“, 1902, գլխաշապիկը:

45 Տես **Feigel, Uwe**, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 118.

46 Տես **Rohrbach, P.**, Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, S. 82. 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածից հետո Յեպպեն անձամբ մեկնել էր Քեսաբ և Ալեքսանդրետ ու այնտեղից բերելով 40 որբերի՝ նրանց տեղավորել էր Ուռհայի որբանոցում: Տես **Künzler, J.**, Dein Volk..., S. 46.

47 Տես **Feigel, U.**, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 82.

48 Որբանոցի հետ երեխաներն այնքան էին կապված, որ հաճախ նույնիսկ իրենց համար ստեղծված նվազույն պայմանների դեպքում չէին կամենում բաժանվել նրանից: Տես **Eckart, F.**, Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1910, S. 25.

պետք է ինքնուրույն դառնան և իրենց բույնը լքեն, սակայն նրանց տունը նրանց համար միշտ պետք է բաց լինի: Նրանք պետք է ունենան այն զգացումը, որ պատկանում են այդ տանը և որ ցանկացած ժամանակ կարող են այնտեղ ապաստան գտնել»⁴⁹:

Որբանոցային կրթության և դաստիարակության մեծ համբավը, որպես կանոն, չափահաս դարձող որբուհիների համար ստեղծում էր երկրպագուների հոծ բազմություն: 1908-1909 թթ. այնտեղ տեղի ունեցան առաջին ամուսնությունները, որոնք հետագայում ավելի և ավելի հաճախակի էին դառնում⁵⁰: Իսկ 1913-ին, ինչպես տեղեկացնում էր Յեպպեն, որբանոցն ապրում էր «նշանադրությունների, հարսանիքների, թոռնիկների»: Հաստատության բոլոր չափահաս աղջիկներն արդեն նշանված էին: Տղաները նույնպես արդեն սկսել էին ամուսնանալ և սովորաբար իրենց հարսնացուներին ընտրում էին որբանոցից⁵¹: Չսայած այդ ամուսնությունները հանգեցնում էին հաստատության բնակիչների թվաքանակի նվազեցմանը, սակայն այն՝ որպես տուն, ոչ առարկայական իմաստով համապատասխանաբար շարունակ մեծանում էր: Համենայն դեպս այդ ըմբռնումն ունեին թե՛ «տանտերերը» և թե՛ նրանց մեծացող ու հեռացող «զավակները»: «Նման երիտասարդ ընտանիքները, անկասկած, պատկանում են մեզ,- նշում էր Կ. Յեպպեն,- նրանք մեր ծառի նոր ընձյուղներն են, և մենք մեզ զգում ենք որպես մի ընտանիք, որտեղ ուրախությունն ու հոգան ընդհանուր են»⁵²:

Յեպպեի ներդրումը մեծ էր նաև որբանոցի սաների արհեստագործական կրթության զարգացման հարցում, ինչը, ինչպես նշվեց, նույնպես նրանց պետք է օգներ որբանոցից հեռանալուց հետո ինքնուրույն գոյատևել: Արհեստանոցների նշանակությունը, սակայն, այդքանով չէր սահմանափակվում: Դրանք ժամանակի ընթացքում շարունակում էին ընդլայնվել՝ նպաստելով որբանոցի մասնակի, իսկ հետագայում նաև լիարժեք նյութական անկախությանը, քանի որ այլապես, ինչպես Յեպպեն էր նշում, նվիրատվությամբ ապրող հաստատությունը չէր կարող «հաստատուն ապագա» ունենալ⁵³: Արտադրության ընդլայնումը բնականաբար պետք է դրդեր դուրս գալ շուկա, ինչը հնարավոր էր մրցակցության արգելքները հաղթահարելու դեպքում: Տեղացի արհեստագործները սովորաբար ձգտում էին թողարկել հնարավորինս էժանագին ապրանքներ՝ իհարկե, այդ պարագայում անտեսելով դրանց որակական կողմը: Կ. Յեպպեն և իր գործընկերները, սակայն, այն համոզմանն էին, որ լավագույն ապրանքը ժամանակի ընթացքում դառնում է ամենագնայունը, և առաջնահերթ նշանակություն էին տալիս արտադրանքի որակական ցուցանիշներին: Եթե նույնիսկ այն այդ պատճառով պետք է ավելի թանկ վաճառվեր, այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեց փորձը, դժվարը միայն սկիզբն էր:

Որբանոցի ձեռնարկությունների արտադրանքը քաղաքի թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական բնակչության մեջ այնքան մեծ համբավ ձեռք բերեց, որ 1903-ից սկսեցին նույնիսկ պատվերներ ստացվել⁵⁴: Շուկայի ընդլայնումն իր հերթին նպաստում էր արտադրության ընդլայնմանը: Երեք տարվա ընթացքում՝ 1905-1908 թթ, օրինակ, մանածագործական արտադրանքը գրեթե եռապատկվեց⁵⁵: Արտադրության ընդլայնման շնորհիվ 1906-ին ձեռնարկությունները կարողացան ինքնաձայնասածակմամբ որբանոցից ֆինանսապես անկախանալ, իսկ տարեվերջից՝ հաստատությանը նույնիսկ մեծաքանակ նյութական օգնություն ցուցաբերել⁵⁶: 1906-1907 թթ.

49 Jeppe, K., Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, S. 106.

50 Անդ, էջ 103:

51 Տես Jeppe, K., Wo bleiben unsre entlassene Waisenkinder, „Der Christliche Orient“, 1913, S. 154.

52 Jeppe, K., Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, S. 106.

53 Տես Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1908, S. 119.

54 Տես Camin, O., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1903, S. 112.

55 Տես Jeppe, K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1908, S. 176.

56 Տես Lepsius, Johannes, Unsere Waisenhäuser, ebd., S. 16.

այն կազմեց շուրջ 6000 մարկ⁵⁷, որից 3000-ը գոյացել էր միայն 1907 թ. առաջին կիսամյակի ընթացքում⁵⁸: Եվս հինգ տարի անց՝ 1912-ին, բացի զանազան օժանդակություններից՝ նրանք հատուցում էին որբանոցի շենքի վարձավճարի մի մասը (մոտ 600 մարկ), տնային կառավարչի աշխատավարձը (800 մարկ) և արտադրությունում ընդգրկված երեխաների դպրոցական պարապմունքների ծախսերը (մոտ 100 մարկ)⁵⁹: Դժվար է գերազնահատել այդ աջակցության կարևորությունը, եթե նկատի առնվի, որ որբանոցում անհրաժեշտաբար կատարվող ծախսերը հաճախ գերազանցում էին ԳԱԱ-ի կողմից հաստատությանը հատկացվող միջոցները:

Որբանոցի ձեռնարկությունների արտադրանքը, որը առանձնապես կաշվե և գործվածքային ապրանքների բնագավառում որևէ մրցակից չունեի⁶⁰, վարակիչ ազդեցություն ունեցավ նաև տեղացի արհեստագործների համար՝ նրանց նույնպես դրդելով աշխատել որակի առաջնահերթության սկզբունքով: «Վերջին տարիներին, նշում էր այդ առթիվ Կ. Յեպպեն, մենք մեծագույն ուրախություն ապրեցինք՝ տեսնելով, որ տեղացի արհեստագործները հետևում են մեր օրինակին և սկսում են նույն ճանապարհով գնալ: Դեռ ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում, քանի որ ավելի հեշտ է արտադրությունը անկման հասցնել, քան այն բարելավել, և նրանց կրթությունն էլ սահմանափակ է: Սակայն այն, որ նրանք տեսել են այդ ուղին, որ նրանց համար արդեն պարզ է, որ ոչ թե խաբեությամբ, այլ միայն խղճմիտ աշխատանքով կարող են իրենց թշվառ դրությունից դուրս գալ, դա արդեն իսկ շատ է, և դրա համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք Աստծուն: Թող նրանք քայլ առ քայլ առաջանան»⁶¹:

Հատկանշական է, որ ինչպես գորգագործական ֆաբրիկայում, այնպես էլ որբանոցի մյուս արտադրական ձեռնարկություններում որբերից զատ աշխատողներ էին ներգրավվում նաև Ուոհայի ունեգուրկ բազմանդամ հայ ընտանիքներից, որոնց Յեպեն ջանում էր հնարավորինս բարձր աշխատավարձեր հատկացնել: 1909 թ. ընթացքում, օրինակ, այդ ընդհանուր թվով 16 աշխատողներից յուրաքանչյուրը շաբաթական ստանում էր 30 պիաստր, որ կազմում էր մոտավորապես 4 մարկ՝ ապահովելով նրանց ընտանիքների գոյությունը⁶²:

Ինչևէ, վերոնշյալ ուրախակի առաջընթացը, որ հնարավոր դարձավ գլխավորապես Կ. Յեպպեի բանիմաց ղեկավարման և վերահսկողության շնորհիվ, խոստանում էր տարիների ընթացքում ձեռնարկությունները վերածել մի հզոր արտադրական համալիրի⁶³, սակայն մոտալուտ պատերազմն այդ հեռանկարն ի չիք դարձրեց:

57 Sten Die Generalversammlung der Deutschen Orient-Mission, ebd., S. 91.

58 Eckart, F., Zehn Jahre Arbeit in Urfa, ebd., S. 22.

59 Jeppe, K., Die Handwerksbetriebe des Waisenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, S. 6. Արտադրական ճյուղերից ամենաեկամտաբերը մանածագործությունն էր: Անդ, էջ 7:

60 Դա տեղական արհեստագործների երբեմն մղում էր այնպիսի արտառոց ձեռնարկումների, ինչպիսին, օրինակ, տեղի էր ունեցել Դիարբեքիում: Այնտեղ, ինչպես վկայում էր Պ. Ռոհրբախը, մի տեղական կաշեգործարան սկսել էր իր արտադրանքի վրա ամրացնել «Ուոհա» կեղծ պիտակը: Տե՛ս Rohrbach, P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, S. 84.

61 Jeppe, K., Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, S. 195.

62 Jeppe, K., Der pädagogische Wert der Handwerksbetriebe des Waisenhauses, „Der Christliche Orient“, 1910, S. 84.

63 «Արհեստանոցները նույնպես իրենց ծաղկման համար պարտական են Յեպպեին, նշում է դր. Ռոհրբախը, որը տարիների փորձառության միջոցով մակարդակը բերել է մեծ բարձրության վրա և վերահսկել, որ երբեք, նույնիսկ շուկայական անսպաստ իրադրության դեպքում արտադրությունը չհեղձվի բարձր որակի և հաստատուն գների սկզբունքից: Դրանով այդ արտադրամասերն այնպիսի հիմքերի վրա են դրվել, որ բավականաչափ կապիտալի ներդրման դեպքում կարող են վերածվել շահութաբեր մեծ ձեռնարկությունների»: Տե՛ս Rohrbach, P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, S. 84.

2. Առաջին աշխարհամարտի տարիներին

1915 թ. հունիսին, երբ արդեն սկսվել էր հայերի զանգվածային տեղահանությունը, որբանոցի երեխաների մեծագույն մասը, որոնք հարազատներ կամ ազգականներ ունեին, ժամանակավորապես ուղարկվել էին նրանց մոտ՝ ամառային արձակուրդն անցկացնելու համար, և հաստատությունում մնացել էին միայն 13 կատարելապես միայնակ երեխաներ: Որբանոցային համալիրի աշխատակիցները ջանում էին անել հնարավորը՝ գեթ տեղի հայերին հալածանքներից ազատելու համար: «Սամարացու» առավել վառ մարմնավորումը դարձավ Կ. Յեպպեն, որն Ուռհայի հայ համայնքի ղեկավար վարդապետ Արտավազդ Կալենդերյանի հետ սերտ համագործակցությամբ ջանում էր ապավեն լինել հայերին: Ընդ որում՝ եթե վարդապետը փորձում էր հայերի համար անվտանգության երաշխիքներ ձեռք բերել կաշառքի և ազդեցիկ կապերի միջոցով, պպա Յեպպեն Ուռհայում կատարված առաջին ձերբակալություններից հետո տեղի ունեցող անօրինականությունների վերաբերյալ շարունակ տեղեկություններ էր հղում Հալեպի ամերիկյան և առանձնապես գերմանական հյուպատոսներին՝ նրանց հորդորելով և աղերսելով իրենց ազդեցությունը գործադրել հայությանը սատար կանգնելու համար⁶⁴: Գերմանական հյուպատոս Վալտեր Ռոսլերից ստացվող պատասխանները, սակայն, հուսահատեցուցիչ էին: «Մենք չենք կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին», - նշում էր դիվանագետը⁶⁵:

Շուտով Ուռհան դարձավ հյուսիսից տարագրված հայերի վերջին հանգրվաններից մեկը՝ դեպի սիրիական անապատներ ճանապարհը շարունակելուց առաջ: Առաջին քարոյալները, որոնք հունիսին սարսափելի ծանր դրության մեջ Ուռհա հասան, կարնեցիներ և զեյթունցիներ էին⁶⁶: Նրանց տրամադրվեց որբանոցի շենքի առաջին հարկը⁶⁷: Երբ զինվորները նրանց հաջորդ օրը վաղ առավոտյան դարձյալ հարկադրեցին ճանապարհը շարունակել, տիրեց ընդհանուր հուսահատություն: «Նրանք ուտելու ոչինչ չէին ստացել, - պատմում էր Յեպպեի կենսագիրը, - և իրենց հագուստներն էլ երկար ժամանակ չէին կարողացել լվանալ: Նրանք ոտքերը վիրավոր և ուռած էին, իսկ կոշիկները՝ պատառոտված: Նրանք չէին ուզում մեկնել, և զինվորներն անխնա հարվածում էին նրանց»⁶⁸:

Կ. Յեպպեն իր բոլոր ջանքերը գործի դրեց՝ քարոյալների մեկնումը գոնե մեկ օրով ուշացնելու համար: Այդ մասին իշխանությանն ուղղված նրա համառ խնդրանքներն ի վերջո բավարարում ստացան, և սկսվեց օգնության տենդագին աշխատանքը: Նրանց բաժանվեց հաց և տաք սնունդ: Կոշկակարանցում զբաղված արհեստավորները հավաքում էին ամենավատ վիճակում գտնվող կոշիկները և նորոգում: Կանայք երեխաների հետ միասին հնարավորություն ստացան լվանալ իրենց հագուստները և վիրակապել վերքերը, և որոշ չափով «թարմացած ու հանգստացած»՝ նրանք շարունակեցին իրենց ճանապարհը⁶⁹:

Ամմիջապես հետո, սակայն, Ուռհա հասան քարոյալների նոր բազմություններ ծայրահեղորեն անօգնական վիճակում⁷⁰, որոնք մասամբ իջևանեցին որբանոցում և մասամբ էլ՝ գորգի ֆաբրիկայի շենքում: Յեպպեին հաջողվեց նրանց ամենօրյա

64 Melkonjan, Misak, Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, S. 15.

65 Անդ:

66 Künzler, J., Dein Volk..., S. 53.

67 Անդ, էջ 16:

68 Sick, I. M., Karen Jeppe..., S. 111.

69 Անդ:

70 «Նրանք այլևս կենդանի մարդիկ չեն...» - նշում էր Յեպպեի կենսագիրը, - ոչ, նրանք ստվերներ են: Ստվերների աշխարհն իր վրեժն է լուծել և դուրս թքել իր բոլոր բնակիչներին: Մի մեծ քարավանատան մեջ, որը նախկինում որբերի ուրախ բնակատեղին էր, շուրջ երկու հազար կանայք և երեխաներ կուտակվեցին՝ արնակարմիր աչքերով և դատարկ հայացքներով, խոռոչված այտերով, վիրավոր ոտքերով, առանց հագուստների, առանց անկողինների... Մի քանիսը ճանապարհին ընկել էին: Նրանք նույնպես ներս են սողում, և բոլոր կողմերից ծայր է առնում անդադար, խոպտո մի շունջ. ջուր, հաց»: Անդ, էջ 117:

այցելություններ կատարելու թույլտվություն կորզել և անարգել ձեռնամուխ լինել օգնության գործին: Անքուն ու անդադար նա շրջում էր մարդկանց մեջ՝ նրանց բաժանելով սնունդ և սպեղանիներ, և նույնիսկ միանգամայն ուժասպառ վիճակում համառորեն մերժելով հանգիստ առնելու՝ իր մերձավորների հորդորները: Ինչպես կարող էր հանգստանալ, երբ իր իսկ բառերով՝ «այդ դժբախտները պետք է գոնե մեկ մարդ ունենային», որը նրանց կարող էր մխիթարել և օգնել⁷¹: Չնայած նա օրվա ընթացքում հասցնում էր կերակրել միայն երեք հարյուր հոգու, մինչդեռ Ուոհայում ժամանակավորապես հանգրվանածների միջին թվաքանակը վեց հազարից չէր իջնում⁷², այնուամենայնիվ քաղցից «գազանացած մարդկանց» նրա ցուցաբերած օգնությունը գերազանահատել հնարավոր չէր: Նա նույն եռանդով իր փրկարար գործը շարունակեց նաև այն բանից հետո, երբ շուտով իշխանությունների պահանջով իր օգնականների և դեռ իր մոտ մնացած 13 որբերի հետ ստիպված եղավ որբանոցի շենքն ազատել՝ տեղափոխվելով այդ հաստատության բժիշկ դր. Ֆիշերի դատարկ առանձնատունը⁷³, որն արձակուրդային հանգիստն անցկացնելու համար վերադարձել էր Եվրոպա⁷⁴:

Աշանը, երբ սկսվել էր Ուոհայի հայության հերոսական ինքնապաշտպանությունը, Յեպպեն մեծ ոգևորությամբ էր հետևում հայերի մղած մարտերին: Երբ, սակայն, ինքնապաշտպանության շարքերում սկսվեց բարոյալքում, և նրանց մեծ մասը գերադասեց անձնատուր լինել, այդ շրջադարձը ցնցող ազդեցություն գործեց ԳՎԱ-ի աշխատակիցներից շատերի վրա, առանձնապես Յեպպեի, որը, ինչպես ինքն էր հաճախակի ասում, հույս ուներ «հայկական թաղամասի այդ անառիկ բարձունքի վրա Թուրքիային տեսնել հայերից հաղթված»⁷⁵:

Անձնատուր լինելուց հետո տղամարդկանց մեծ մասը, քաղաքից դուրս բերվելով, զանգվածաբար ոչնչացվեց թուրքերի և քրդերի կողմից, իսկ մյուսներն ուղարկվեցին բանտ և հաջորդ օրերին ծանր խոշտանգումներից հետո ռազմական դատարանի որոշմամբ կախաղան հանվեցին⁷⁶: Ինչ վերաբերում է կանանց և երեխաներին, ապա նրանք, մինչև տղամարդկանց հետ հաշվեհարդարը կավարտվեր, արգելափակվեցին երեք մեծ շենքերում, որտեղ Յեպեն, Կյունցլերը և նրա կինը նրանց ամեն օր սնունդ էին մատակարարում⁷⁷:

Որքան էլ մեծ էր բոլոր դժբախտներին սնունդով ապահովելու նրանց ցանկությունը, այնուամենայնիվ, բազմահազար սովահար մարդկանց քաղցը բավարարելն անհնար էր: Միայն Յեպպեն օրական երկու-երեք անգամ ավանակի վրա բարձրված ուտելիք էր տանում դատապարտվածներին՝ կարողանալով ամեն օր հոգ տանել շուրջ 250 մարդու համար⁷⁸: Երբ, սակայն, ուժերի անօրինակ լարումով նա փորձում էր օգտակար լինել նաև մյուսներին, հարկ էր լինում դիմել գինվորների օգնությանը. «Նրանք հասել էին այն աստիճանին, որ ինչպես վայրի գազաններ հարձակվում էին, հենց որ ուտելիքի հոտ էին առնում... Առաջին օրը Կարենը տեսավ, թե ինչպես են նրանք հարձակվում մի սատկած և կիսով չափ նեխած ավանակի վրա, պատառոտում նրան և ազահաբար խժռում...»⁷⁹:

Յեպպեի օգնությունը, սակայն, թշվառության ծովում միայն մի կաթիլ էր, իսկ 1915 թ. նոյեմբերին ծայր առավ նաև Ուոհայի հայերի աքաղաղումը՝ ուղեկցվելով աննկարագրելի սարսափներով:

71 Melkonjan, M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, S. 16.

72 Jeppe, K., Das Schicksal unseres Waisenhaus im Weltkrieg, „Der Christliche Orient“, 1918, S. 57.

73 Melkonjan, M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, S. 16. Երեխաներից բացի նրա հետ այնտեղ տեղափոխվեցին նաև իր որդեգիրները՝ որբանոցի նախկին սաներ Միսաքը և Լուիզան, որբանոցի մի քանի աշխատակիցների հետ: Տե՛ս Sick, I. M., Karen Jeppe..., S. 123.

74 Künzler, J., Dein Volk..., S. 48:

75 Անդ, էջ 115:

76 Անդ, էջ 136:

77 Künzler, Jakob, Im Landes des Blutes und der Tränen, Potsdam 1921, S. 50.

78 Sick, I. M., Karen Jeppe..., S. 146.

79 Անդ:

Մարսափների այդ քառսում, այնուամենայնիվ, Յեպպեն անձնվիրաբար շարունակեց իր փրկարար առաքելությունը նույնիսկ այն ժամանակ, երբ դա արդեն կատարելապես անհնար էր թվում: Նրա տանն ապաստանող մարդկանց թիվն օրեօր շարունակ ավելանում էր՝ օգոստոսին հասնելով 30-ի, որոնց մի մասը տղամարդիկ էին⁸⁰: Մեկուսի, արվարձանային վայրում գտնվող այդ տանը նա երեխաներին սկսեց դասավանդել գերմաներեն՝ ջանալով նրանց համար ստեղծել ըստ հնարավորին խաղաղ և բնականոն առօրյա⁸¹. Խաբուսիկ խաղաղություն, որը, իհարկե, երկար չէր կարող տևել: Երբ ինքնապաշտպանությունը տապալվեց, և սկսվեց արքորը, թաքնված հայերին հայտնաբերելու նպատակով քաղաքում ծայր առան խուզարկություններ: Առանձնակի հետևողականությամբ որոնվում էր քահանա Գարեգին Ոսկերչյանը, որը նույնպես իր կնոջ հետ միասին պատսպարվել էր Յեպպեի տանը⁸²: Ուստի վերջինս նպատակահարմար համարեց նրանց հեռացնել ու թաքցնել մերձակա այգիներից մեկում՝ ապահովելով սննդով⁸³: Ինչպես հետագա օրերը ցույց տվեցին, դա միանգամայն հիմնավորված էր, քանի որ Գարեգին Ոսկերչյանին հայտնաբերելու նպատակով Յեպպեի տանը մանրագնին խուզարկությունները կրկնվեցին բազմաթիվ անգամներ⁸⁴: Նրան ի հայտ բերելու համար գործի էր դրվել ոստիկանների և լրտեսների մի ամբողջ բանակ, և «վտանգավոր թշնամու» համարում ստացած քահանան, ծանր վիճակից ելք չգտնելով, միննույն ժամանակ իր պատճառով մյուս ծայտյալներին չվտանգելու համար նոյեմբերի սկզբին իր կնոջ հետ միասին ինքնասպանություն գործեց⁸⁵:

Հուսալով, որ իր մոտ մնացած երեխաները և կանայք, գտնվելով գերմանական որբանոցի պաշտպանության ներքո, կկարողանային արքորից խուսափել, մինչդեռ թվով 6 տղամարդիկ⁸⁶ հաստատապես սպանվելու էին, Յեպպեն իր տանից տղամարդկանց ուղարկեց այն այգին, որտեղ սկզբնապես պատսպարվել էր Գարեգին Ոսկերչյանը, և որտեղ նրանք մնացին մինչև աշնան վերջը⁸⁷: Յեպպեի հույսերը, սակայն չարդարացան, և կարճ ժամանակ անց որբանոցում ու նրա տանը կատարված խուզարկությունից հետո ոստիկաններն իրենց հետ տարան այնտեղ գտնվող երեխաներին ու կանանց⁸⁸:

Նոյեմբերին՝ ցրտան ընկնելուց հետո, Յեպպեի տղամարդ պաշտպանյալներն այլևս չէին կարող դրսում մնալ, ուստի Յեպպեն որոշեց նրանց դարձյալ իր մոտ բերել: Ըստ նրա մտահղացման, որի իրականացումը հանձնարարվեց Միսաքին, տանը՝ ճաշասեղանի տակ փորվեց մի ստորգետնյա խոռոչ, որը կրավականացներ վեց տղամարդկանց տեղավորելու համար: Այնուհետև այն ծածկվեց տախտակներով, վրան փռվեց մի գորգ, և դրա վրա էլ դրվեց ճաշասեղանը: Այդ խոռոչը

80 Անդ, էջ 130:

81 Անդ:

82 Մի քանի ձեռնակալված հայեր խոշտանգումներից հետո ցուցմունք էին տվել, որ Գարեգին Ոսկերչյանը եղել էր Ռոնհայի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկը, և վերջինս՝ «վտանգավոր թշնամու» համարումը պայմանավորված էր դրանով: Տե՛ս **Künzler, J.**, *Dein Volk...*, S. 57.

83 **Melkonjan, M.**, *Karen Jeppes schwerste Zeit*, „Orient im Bild“, 1936, S. 31.

84 Անդ:

85 Անդ, էջ 14: Նրա երեխաները շարունակեցին մնալ Յեպպեի մոտ: Անդ, էջ 26:

86 Այդ տղամարդկանց թվաքանակի մասին երբեմն տարբեր տվյալներ են հաղորդվում: Քանի որ կյունցերը, որը նաև իրադարձությունների ականատես էր, հաղորդում է 6 տղամարդկանց մասին, հողվածում հինք է ընդունվել նրա տեղեկությունը:

87 Անդ, էջ 47: Յեպպեն նրանց հետ կապ էր պահպանում Միսաքի միջոցով, որը, ծպտված որպես թուրք, գիշերային ժամերին այցելում էր նրանց և հոգում սննդի տեղափոխման հարցը: Բոլոր ծայտյալներն իրենց մոտ պահում էին Յեպպեից ստացած՝ որոշ քանակությամբ թույն, որպեսզի թուրքերի ձեռքը կենդանի չընկնեին: Անդ:

88 Թաքնված հայերի հայտնաբերելու նպատակով որբանոցում, այդ հաստատության հիվանդանոցում և քաղաքում բնակվող եվրոպացիների տներում կատարված խուզարկությունների ժամանակ հայտնաբերվեցին շուրջ 200 հայեր, որոնք թշվեցին անապատ: **Künzler, J.**, *Dein Volk...*, S. 58. Նրանց թվում էր նաև Յեպպեի որդեգիր Լուիզան, որին, սակայն, մի քանի օր անց հաջողվեց կաշառքով ետ բերել և, հակառակ բոլոր հետապնդումներին, հուսալիորեն թաքցնել: **Melkonjan, M.**, *Karen Jeppes schwerste Zeit*, „Orient im Bild“, 1936, S. 47.

դարձավ տղամարդկանց թաքստոցը: Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ այն՝ որպես ապաստարան, չէր կարող հուսալի լինել, քանի որ մինչև տախտակները կհանվեին, տղամարդիկ կմտնեին այնտեղ, տախտակները դարձյալ իրենց տեղը կդրվեին, դրանց վրա կփռվեր գորգը, և ապա կդրվեր ճաշատեղանը, անցնում էր չափազանց շատ ժամանակ, իսկ ամենավատն այն էր, որ երբ որևէ մեկը մոտենում էր սեղանին, քայլերի ժամանակ լավող աղմուկը մատնում էր, որ հատակի տակ դատարկ տարածություն կա: Դա ոստիկանները կարող էին նկատել, ուստի թաքստոցը պետք է փոխվեր: Տունը ուներ մի նկուղ, որտեղ լույսը թափանցում էր մի անցքից, սակայն հնարավոր չէր այդ անցքի միջով հայացք նետել նկուղի ներքո: Այդ նկուղի եզրային մասում փորվեց մի խոռոչ, որը կտեղավորեր վեց տղամարդկանց, և դա դարձավ նրանց պատսպարանը: Յեպպեի մոտ վերադառնալու առաջին իսկ օրից նրանցից մեկը շուրջօրյա պահակություն էր անում, որպեսզի երբ որևէ ոստիկան կամ ժանդարմ տանը մոտենար, տագնապ հնչեցնե՞ր⁸⁹:

Հաճախակի խուզարկությունների ընթացքում հայտնաբերվելու ամենօրյա երկյուղով լի մռայլ և հոգեմաշ ամիսները հաջորդում էին միմյանց, երբ ներխուժեց մի նոր թշնամի ևս՝ տիֆը, որով վարակվեցին նաև Յեպպեի պաշտպանյալները: Յեպպեն հարկադրված էր ստանձնել նաև հիվանդապահուիկ պարտականությունը և բազմաթիվ անքուն գիշերներից հետո ի վերջո կարողացավ բոլորին ապաքինել: Անձամբ, սակայն, նա այլևս ի վիճակի չէր դիմանալ տևական անասելի լարվածությանը, և ուժասպառ նյարդերը տեղի տվեցին: Միտ մեկ ամիս գրեթե անընդմեջ նա գտնվում էր անզիտակից վիճակում⁹⁰, և այդ ողջ ընթացքում նրա խնամքը ստանձնել էին նրա ծայտյալ պաշտպանյալները, որոնք, օրվա որոշակի ժամերի թաքստոցից դուրս գալով, հոգ էին տանում նրա մասին: Այն, թե Յեպպեն որքան վճռական էր իր հայ պաշտպանյալներին սատարելու հարցում, ակնբախ դարձավ նաև մի դիպվածով, որը կարող էր թե՛ նրա և թե՛ մյուսների համար ճակատագրական լինել: ԳԱԱ-ի Ուոհայի մասնաճյուղի գլխավոր տնօրեն Ֆրանց Էքարտը, ի տարբերություն Յեպպեի, Կյունցլերի և իր մյուս աշխատակիցների, հանդուրժողական վարքագիծ էր որդեգրել հայերի տեղահանման թուրքական քաղաքականության հանդեպ՝ պնդելով, որ պատերազմական իրավիճակում իրենք իրավունք չունեն հակադրվել թուրքական պաշտոնական քաղաքականությանը: Մասնավորապես հայտնի է, որ Յեպպեն մարդկանց իր մոտ թաքցնելու հանգամանքը Ֆ. Էքարտից պահում էր խիստ գաղտնի, իսկ մի անգամ, երբ պահակի թերացման պատճառով դա վերջինիս կողմից բացահայտվեց, Յեպպեի և նրա պաշտպանյալների համար կարող էր ունենալ ամենածանր հետևանքները: «Միս Եփիեն ամիսն ավելի էր, որ գամուած կը մնար անկողին...- պատմում էր նրա պաշտպանյալներից մեկը՝ Պետրոս Տեր-Պետրոսյանը,- Այդպիսի օր մըն էր, ես և Գէորգը իր մօտ էինք, երբ յանկարծ սենեակէն ներս մտավ ծանօթ հեր Էքարտը, մենք քարացանք այդ վայրկեանին: Էքարտը հիւանդտեսի եկած էր: Դժուարաւ բարձրացանք մեր տեղէն և դուրս ելանք սենեակէն: ... Էքարտին մեկնելէն վերջ, վազեցինք Միս Եփիէին մոտ և զայն գտանք բոլորովին զգայագիրկ վիճակի մէջ: Բարեբախտաբար շուտով Քիւնցլերը հասաւ ու ներարկումներով սթափեցուց զայն: Պարզուեցաւ, որ Էքարտը քանի մը օր պայմանաժամ տուած է Միս Եփիէին, որ մեզ յանձնէ կառավարութեան: Էքարտը պատճառաբանած էր, որ ամբողջ գերմանական միսիոնը իր պատճառաւ պիտի վտանգուի, ու իրենք իբրև Թուրքիոյ դաշնակից պարտաւոր են դէմ չերթալ թուրքերու քաղաքականութեան: Այս հանդիպումէն վերջ, երբ միս Եփիեն քիչ մը ինքզինք գտաւ, Միսաքին ըսած էր, եթէ Էքարտը

89 **Künzler, J.**, Dein Volk..., S. 62-63, 67-68. Հմմտ. **Sick, I. M.**, Karen Jeppe..., S. 130.

90 «Մենք այն տպավորություն ունեինք, որ նրա նյարդերը ամբողջովին սպառվել են,- պատմում էր Մ. Մելքոնյանը:- Նա կարծես կորցրած լիներ իր բանականությունը: Հաճախ վեր էր թռչում անկողնուց... Հաճախ չէր գիտակցում, թե ինչ է անում և խառնաշփոթ, անհասկանալի մտքեր էր արտաբերում»: **Melkonjan, M.**, Karen Jepses schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, S. 37.

անգամ մըն ալ իր տունը մտնէ, գնդակի բաժին մը ընէ զայն»⁹¹:

Երբ Յեպպեն փոքրիշատե ապաքինվեց, այլևս չունէր շարժման նախկին ազատությունը: Նյարդերի կազդուրման համար նրան անհրաժեշտ էր երկարատև հանգիստ, ինչի մասին այդ օրերին անհնար էր նույնիսկ երազել:

Ինչևէ, ժամանակն անցնում էր, և 1917 թ. սկզբին թվում էր, թե վտանգն արդեն սկսել է մեղմանալ, երբ կառավարությունը որոշում ընդունեց բռնագրավել Յեպպեի բնակարանը՝ պահանջելով այն 24 ժամում ազատել: Հերթական այդ փորձությունը Յեպպեի և նրա պաշտպանյալների համար կործանարար կլինէր, եթե պատահականությունն օգնության չհասներ: Այդ օրերին իր դասակով Ուռհայում էր գտնվում մի գերմանացի մայր, որին Յեպպեն Կյունցլերի միջոցով առաջարկեց բնակվել իր տանը: Մայրն ընդունեց առաջարկը և տեղափոխվեց այնտեղ՝ ոստիկաններին արգելելով տան հանդեպ որևէ ոտնձգություն կատարել: Բայց քանի որ, երաշխավորված չէր, թե նա դեռ որքան այնտեղ կմնա, Յեպպեն իր «ընտանիքի» հետ 1917 թ. փետրվարին մեկնեց այգիներում գտնվող իր ամառանոցը, որտեղ նրանք մի լեզգի շեյխի թաքուն աջակցությամբ կարողացան դիմակայել մինչև աշուն⁹²: Իսկ աշնանը, երբ կառավարությունը կենդանի մնացած հայերին այլևս նախկին հետևողականությամբ չէր հետապնդում, եկավ բաժանման պահը: Յեպպեն իր պաշտպանյալներին ուղարկեց Ուռհայից հարավ՝ արաբների մոտ, որտեղ նրանք կարող էին ապահով լինել, իսկ իր երկու որդեգիրներին՝ Միսաքին ու Լուիզային ժամանակավորապես հանձնեց մի քուրդ առաջնորդի պաշտպանությանը և դեկտեմբերին մեկնեց Եվրոպա... շուտով վերադառնալու համար⁹³:

Շարունակությունը հաջորդիվ

Աշոտ Ն. Հայրունի – 2005-ից Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Բազմիցս գիտահետազոտական աշխատանքներ է կատարել Գերմանիայում: Հրատարակել է 5 մենագրություն և մոտ 150 գիտական հոդվածներ ու այլ ուսումնասիրություններ, որոնց զգալի մասը լույս է տեսել նաև արտերկրում:

Summary

KAREN JEPPE'S MISSION OF SALVATION. A COMPREHENSIVE VIEW

Part one. The activities of the great humanist in Urfa

Key words – Karen Jeppe, Urfa, Genocide (Mets Yeghern), Johannes Lepsius, German Eastern Mission, Humanism, children, religious propaganda, ateliers.

Ashot N. Hayruni

This article is a new attempt to fully cover the work of Karen Jeppe, a woman who, unlike many other friends of the Armenian people and humanists, not only raised her voice of protest against the Turkish genocidal policy and

91 Սահակեան Արամ, Դիւցազնական Ուռհան և իր հայրորդիները, Բեյրութ, 1955, էջ 971-972:

92 Անդ, էջ 975-976: Հմնտ. Melkonjan, M., Karen Jappes schwerste Zeit, „Orient im Bild“, 1938, S. 10.

93 Անդ: Հմնտ. Künzler, J., Dein Volk..., S. 72-73. Հմնտ. Չոլաքեան, Յ., Քարէն Եփփե... էջ 32-33:

informed the civilized world about it, but also undertook a specific mission of salvation and dedicated her whole life to that mission.

The activity of Jeppe in the Armenian children's home of Urfa before the First World War is described in the first part of the article. In 1902, thanks to the publications and presentations of Aga Meier Benedictsens, the friend of the Armenian people, Age Meyer Benediktsson, the founder and the head of the Danish Committee for Assistance to Armenia, young Karen Jeppe learned about the terrible situation of Armenians who survived the massacres in the 1890s and, against the will of their parents, she decided to go to Armenia and devote herself to the needs of the Armenian people. Jeppe informed Benediktsson of her decision and when she learned that J. Lepsius was looking for a teacher for an orphanage in Urfa, she addressed to the latter and received his consent. On October 4, 1903, she left for Urfa, where she soon became the de-facto head of this institution.

In 1915, when the mass eviction of Armenians began, Karen Jeppe temporarily sent most of the children from the orphanage to their relatives to spend the summer holidays. The staff of the orphanage tried to do their best to save local Armenians from persecution. After the first arrests in Urfa, Jeppe regularly provided information to the American and German consuls in Aleppo about the continuing illegality, urging them to use their influence in support of the Armenians. At the same time, Jeppe harbored many innocent Armenians in her home who were threatened with death.

In the fall of 1917, when the government no longer pursued the surviving Armenians as before, Jeppe sent the Armenians hiding in her house to the south of Urfa to Arabs where they could be safe. She also temporarily sent her two foster children to a Kurdish leader and left for Europe in December ... to return soon.

Резюме

СПАСАТЕЛЬНАЯ МИССИЯ КАРЕН ЕППЕ. ВСЕСТОРОННИЙ ВЗГЛЯД

Часть первая. Деятельность великой гуманистки в Урфе

Ключевые слова – Карен Еппе, Урха, Геноцид армян, Иоганнес Лепсиус, Немецкая восточная миссия, гуманизм, дети, религиозная пропаганда, мастерские.

Ашот Н. Айруни

Эта статья представляет собой новую попытку полностью охватить деятельность Карен Еппе, человека, который, в отличие от многих других друзей армянского народа и гуманистов, не только подняла свой голос протеста против турецкой политики геноцида и сообщила цивилизованному

ՀԻՇՆՂՂՈՒԹՅՈՒՆ
2017
հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
Թ. (ԺԵ) քառի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
ՀՀ Կառավարության հանրապետության

миру об этом, но также взяла на себя определенную миссию по спасению и посвятила этому всю свою жизнь.

В первой части статьи представлена деятельность Еппе в армянском детском доме Урфы до начала Первой мировой войны. В 1902-ом году юная Карен Еппе благодаря публикациям друга армянского народа, основателя и руководителя датского комитета по оказанию помощи Армении, Аге Мейера Бенедиктсена узнала об ужасном положении армян переживших массовую резню в 1890-х годах и против воли родителей, решила поехать в Армению и посвятить себя нуждам армянского народа. Еппе сообщила Бенедиктсену о своем решении и когда узнала, что Й. Лепсиус искал учителя для детского дома в Урфе, она обратилась к Лепсиусу и получила его согласие, 4 октября 1903 года уехала в Урфу, где вскоре она стала де-факто главой учреждения.

А в 1915 году, когда началось массовое выселение армян, Карен Еппе временно отправила большинство детей из приюта к родственникам, чтобы провести летние каникулы. Персонал приюта пытался сделать все возможное, чтобы освободить хотя бы местных армян от преследований. После первых арестов в Урфе, Еппе регулярно предоставляла информацию американским и немецким консулам в Алеппо о продолжающихся преследованиях, призывая их воспользоваться своим влиянием в поддержку армян. В то же время Еппе укрывала в своем доме многих невинных армян, которым угрожала смерть, предоставляя им также еду и одежду.

Осенью 1917, когда правительство больше не преследовало выживших армян как прежде, Еппе отправила скрывавшихся в ее доме армян на юг Урфы к арабам, где они могли быть в безопасности, а своих двух приемных детей она временно передала одному курдскому предводителю и в декабре отправились в Европу... чтобы скоро снова вернуться.